



REV. FR. UNTZAG NALBANDIAN
ARMENIAN CHURCH OF
THE HOLY ASCENSION

1460 Huntington Turnpike
Trumbull, Conn. 06611
Tel: 203/372/5770

ՍԲ. ՀԱՄԲԱՐՉՈՒՄ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻ

Տ. ԸՆԶԱԿ ՔԸՆՑ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ, Հովիտ

Միացեալ Նահանգաց Արեւելեան
Թեմին Բարեխնամ Առաջնորդ
Գերշ.Տ.Թորգոմ Արք.Մանուկեանին
նիւ Եորք, Ն.Ե.

20, Փետրուար, 1986

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Անցնող տարին, մեր Ս. Համբարձում համայնքին համար եղաւ Հոգեւոր եւ մշակութային ձեռնարկներով լի տարի մը: Մեր տրատու անդամներուն վրան աւելցան 30 նոր անդամներ: Ունեցանք երեք մահ, երեք Պսակ եւ չորս մկրտութիւն: Ունեցայ աւելի քան 100 ժողովներ եւ կատարեցի նոյնքան այցելութիւններ: Վերականգնացուցի մեր եկեղեցւոյ 7-ը կազմակերպութիւնները: Կազմեցի այլ յանձնախումբեր եւս յօգուտ մեր համայնքին ինչպէս օրինակ. մշակութային Յանձ. , "Ապրիլ 24"ի Յանձ. եւլն:

Սրբազան Հայր, մեր տարեկան, աւելի ճիշդը 1985 ին համայնքիս ունեցած ձեռնարկներու ցանկը պիտի խնդրեմ որ իմ տարեկան ծուխիս ներկայացուցած տեղեկագրիս մէջը նայիք: Յատկապէս յիշատակութեան արժանի է Հայր Օշականի "Երեւան" երգչախումբին ելոյթը, երբ 200 է աւելի Հայութիւն մը ներկայ եղաւ այդ բացառիկ համերգին, եւ քոլորն ալ հպարտ ու զոհունակ սրտով գնացին իրենց բնակարանները: Մեր ժողովուրդը ծառաւի է նման որակաւոր մշակութային ձեռնարկներու:

Անցնող տարուան ընթացքին զբաղեցայ նաեւ մեր եկեղեցւոյ մէջ կառուցուելիք կողքի զոյգ խորաններու շինութեամբ: Ուրախ եմ նշելու որ վերջերս այս խորանները տեղադրուեցան մեր եկեղեցիին մէջ: Յոյս ունինք որ 1986 ին 2երդ Սրբազնութիւնը կ'օժէ զանոնք:

Կանոնաւոր կերպով ունեցանք Կիրակնօրեայ եւ Հայ Վարժարաններու դասաւանդութիւնները: Դպրաց դասը ունեցաւ իր փորձերը, անոնց թիւն ալ բարձրացաւ հինգով: Համայնքիս երիտասարդները հաւաքեցի մեր եկեղեցւոյ շուրջը, եւ իրենք ալ ունեցան յաջող ձեռնարկներ:

Նիւթապէս ալ յաջող տարի մըն էր: Մեր տարեկան ծախսերը հոգալէ վերջ, ծխական խորհուրդս 40,000 (Քառասուն հազար) տոլլարի վճառում մը ըրաւ դրամատան, այդքանով նուազեցնելով մեր պարտքէն:

Ծխական խորհուրդիս հետ ջերմ է յարաբերութիւններս: Երկուստեք լաւ կը հասկնանք զիրար. ամէն ձեւով գորավիզ կը կանգնին ինձ:

Կատարեմ 1986ը ալ աւելի յաջող տարի մը պիտի ըլլայ մեր ողջ համայնքին համար:

Մնամ Թեմիդ խոնարհ ծառան՝

Fr. Untzag Nalbandian
Ընծակ Քնն. Նալպանտեան